Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
հունիսի 22-ի նիստի N 25
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

<<ԳՈՌԱՎԱՆԻ ԱՎԱԶՈՒՏՆԵՐ>> ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
2013-2015թթ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Ծրագրի նպատակը

Ծրագիրն իրականացվում է<<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրի տարածքի էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համակարգի և դրանց բաղադրիչների պահպանության, բնական և արհեստական վերարտադրության և օգտագործման ապահովման նպատակով:

2. Իրավիճակի նկարագրությունը

<<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրը կազմավորվել է 1958թ-ին, ՀՍՍՀ ՄՍ հունվարի 29-ի N20 որոշմամբ՝ 200 հա տարածքի վրա: Այն գտնվում է ՀՀ Արարատի մարզի, Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթություններում, Գոռավան գյուղական համայնքի վարչական սահմաններում՝ 1100-1200մ բարձրության վրա:

<<Գոռավանի ավազուտներ>>պետական արգելավայրի կանոնադրությունը և տարածքի չափը հաստատվել են ՀՀ կառավարության 2007 թ.-ի հունվարի 25-ի <<Խոր Վիրապ>> պետական արգելավայր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. մայիսի 30-ի N925-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին>> N 975-Ն որոշմամբ: Համաձայն այդ որոշման, <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրը, առանց պետական արգելավայրի կարգավիճակի փոփոխության, հանձնվել է ՀՀ բնապահպանության նախարարության <<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի ենթակայությանը՝ պահպանության և վերականգնման աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

ՀՀ կառավարության 2011թ.-ի մարտի 31-ի N 324-Ն որոշմամբ հաստատվել է <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագծի սխեման: Ներկայումս արգելավայրը զբաղեցնում է 95.99 հա տարածք:

<<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրը գրանցված է 2011թ-ի հուլիսի 18-ին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արարատի տարածքային ստորաբաժանման կողմից, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 03 031-1-1 մատյանի 000 0026 համարի տակ: Կադաստրային համարն է 03-031-0249-0090:

Պետական արգելավայրի պահպանության օբյեկտներն են մնացորդային սորուն ավազների եզակի բուսական և կենդանական տեսակները:

Արգելավայրը ձևավորվել է Արարատյան հարթավայրի ՈՒրծի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի ռելիկտային ալլյուվյալ նստվածքների մի քանի տեղամասերի վրա, ծովի մակերևույթից 920-980 մ բարձրության վրա:

Պահպանության օբյեկտն է Անդրկովկասում բնական ջուզգունի (Calligonum polygonoides) միակ ամբողջական աճման էկոհամակարգը, իր յուրօրինակ ֆլորայի և ֆաունայի էնդեմիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներով:

Տարածքը պատկանում է Հայաստանի Երևանյան ֆլորիստիկ շրջանին: Արգելավայրի բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Արգելավայրի շրջակայքում տեղակայված ուժեղ քարքարոտ տեղամասերում ներկայացված են կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը Երևանյան ֆլորիստիկ շրջանի հազվագյուտ տեսակներով ամենահարուստ տարածքն է, որը պահանջում է անհետաձգելի պահպանության միջոցառումներ: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր:

Շնորհիվ բնորոշ, յուրահատուկ ֆլորիստիկ բազմազանության և հազվագյուտ ու անհետացող բուսատեսակների ներկայացվածության մեծ աստիճանի, արգելավայրը հանդիսանում է առանձնահատուկ կարևորություն ունեցող օբյեկտ Հայաստանի ֆլորայի և բուսականության պահպանության համար, ինչի պատճառով էլ առաջնահերթ անհրաժեշտություն է <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրի պահպանության ռեժիմի բարելավումը:

Էնդեմիկ ներկայացուցիչներից են Salsola tamamschjanae, Acantholimon araxanum: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ:

Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ, այդ թվում Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում գրանցված այնպիսի տեսակներ, ինչպիսիք են միջերկրածովային կրիան /Testudo graeca/, պարսկական կլորագլուխը /Phrinocephalus persicus/ և Դալի մկնիկը /Meriones dahli/: Վերջինը հանդիսանում է Հայաստանի համար էնդեմիկ տեսակ: Անողնաշար կենդանիների ֆաունան ուսումնասիրված է ոչ բավարար, սակայն հենց այս Արաքսի հարթավայրի տարածքից նկարագրված է գիտության համար բզեզների 6 նոր տեսակ, որոնք աշխարհում ուրիշ ոչ մի վայրում չեն հանդիպում, մոտ 20 տեսակներ հանդիսանում են Արաքսի հարթավայրի էնդեմիկներ:

<<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրի տարածքում անողնաշարավորների ֆաունան, ըստ փորձագիտական գնահատականի, կազմում է մոտ 700 տեսակ: Առավել լավ ուսումնասիրված կարգաբանական խմբերից՝ փափկամարմինների (Mollusca) տեսակների թիվը կազմում է 7, միջատներից՝ բզեզներինը (Coleoptera)՝ մոտ 200, ուղղաթևերինը (Orhtoptera)՝ 28 և ցերեկային թիթեռներինը (Lepidoptera-Rhopalocera)՝ 18 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ, այդ թվում՝ արաքսյան գնայուկ բզեզը (Zuphium araxidis Khnz.), Ռեյտտերի հացաբզեզը (Anisoplia reitteriana Sem.), կովկասյան փարավոնը (Pharaonus caucasicus Rtt.), կովկասյան (Glaphyrus caucasicus Rtt.), վեդիական (Tanyproctus vedicus Kalashian) և արաքսյան (Tanyproctus araxidis Rtt.) բնդեռիկները, արաքսյան չրխկանը (Cardiophorus araxicola Khnz.), վեդիական (Sphenoptera vediensis Kalashian), Խնձորյանի (Sph. khnzoriani

Kalashian) ոսկեբզեզները, արաքսյան (Agrilus araxenus Khnz.), Ռյաբովի ծաղկեփոշեկերները (Mycetocharina rjabovi Khnz.) և Սեմենովի սևամարմինը (Cyphostetha semenovi Rtt.):

Այս տեսակների գոյությունը կապված է ավազուտային բիոտոպների հետ, որոնք Հայաստանում գրավում են աննշան տարածություններ / մոտ 300 հա/՝ հանդիսանալով Արալիխի ավազուտների ռելիկտային զանգվածը:

Վերջին 10 տարիների ընթացքում արգելավայրի վիճակը կտրուկ վատացել էր:

Չնայած 1958 թվականից Գոռավանի ավազուտները առանձնացվել են որպես պետական արգելավայր, սակայն առ այսօր, ոչ մի բնապահպանական միջոցառում այստեղ չի իրականացվել: Ավելին՝ արգելավայրի տարածքում շինարարական նպատակով իրականացվում էր ավազի արդյունահանում: Գարնանային և աշնանային արածեցումը հանդիսանում էր մշտական ճնշող գործոններից մեկը: Վերջին տարիներին իրավիճակը՝ կապված արածեցման ժամանակահատվածի և կառուցվածքի փոփոխության հետ, վատթարացել էր, որը գործնականում իրականացվում էր կլոր տարին և բացասական մեծ ազդեցություն են թողել բուսականության վրա: Արգելավայրի տարածքում ջեռուցման համար /վառելափայտ/ ակտիվ կերպով հատվում էր ջուզգունը, որից պահպանվել է մոտ 300 թուփ՝ ընդ որում, դրանցից շատերն էլ գտնվում են ճնշված վիճակում: Ըստ վերջին դիտարկումների հազվագյուտ ու անհետացող բույսերի և կենդանիների տեսակների բնական վերարտադրությունը գրեթե չի կատարվում: Առանց առկա իրավիճակի փոփոխության այս համակեցությունը մի քանի տարվա ընթացքում կարող է դադարեցնել իր գոյությունը:

Այս յուրօրինակ համակեցության պահպանության համար անհրաժեշտ են իրատեսական գործնական միջոցառումներ, որոնցից լավագույնը արգելավայրի պահպանության հատուկ ռեժիմի կիրառումն է հստակ ամրակայված սահմանների առկայության պայմաններում, որը կընդգրկի ոչ միայն բուն ավազուտները, այլ նաև հնարավոր կդարձնի կիրառել պահպանման գոտու ռեժիմը հարակից քարքարոտ կիսաանապատային տեղամասերի վրա:

Սույն ծրագիրը բխում է <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրի բնապահպանական բազմաֆունկցիոնալ նշանակությունից և արգելավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից:

Ներկայումս տեղի բնակչության հետ առկա են մի շարք հակասություններ: Այդ հակասությունները հիմնականում պայմանավորված են արգելավայրի ու Գոռավան համայնքի սահմանների վերածածկմամբ և արգելավայրային ռեժիմի կիրառմամբ, համայնքի համար նախատեսված արոտավայրերը և խոտհարքները տանող ճանապարհների բացակայությամբ և այլն:

3. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Սույն ծրագրի իրականացումը նախադրյալներ կստեղծի մի շարք բնապահպանական և սոցիալ-տնտեսական հրատապ խնդիրների լուծման համար:

<<Գոռավանի ավազուտներ>>պետական արգելավայրի վերականգնման աշխատանքները և միջոցառումները թույլ կտան վերականգնել դեգրադացված լանդշաֆտները և տնտեսական գործունեության արդյունքում վնասված տարածքների կենսաբազմազանությունը, ինչպես նաև բարձրացնել արգելավայրի պահպանության աշխատանքների կոորդինացման և ղեկավարման արդյունավետությունը:

Անցած տարիների ընթացքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, ինչպես Գոռավան համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ընդլայնման ոլորտում, այնպես էլ արգելավայրի բնական էկոհամակարգերի վիճակի փոփոխության առումով: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի ճշգրիտ տեղեկատվական բազա,

ինչպես արգելավայրի տարածքի, այնպես էլ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների տարածման վերաբերյալ, ինչը կստեղծի նախադրյալներ արգելավայրի և դրա կենսաբազմազանության արդյունավետ պահպանման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում նախապայմաններ կստեղծվեն ջուզգունի տնկարանային տնտեսության հիմնման և զբոսաշրջության զարգացման համար, որոնք իրենց հերթին համայնքի բնակչության համար լրացուցիչ աշխատատեղերի հնարավորություն կտան և կստեղծվեն նախադրյալներ արգելավայրին հարակից բնակավայրերի զարգացման համար:

Արգելավայրում կարճատև հանգստի համար ծրագրով նախատեսված ենթակառուցվածքի ստեղծումը նախադրյալներ կապահովի ռեկրեացիոն գործունեության ոլորտում ծառայությունների մատուցման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա բնապահպանական աշխատանքների արդյունավետությունը և կնվազեն համայնքի բնակչության հետ գոյություն ունեցող հակասությունները:

Ընդհանուր առմամբ ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ՝ արգելավայրի պահպանության և օգտագործման ռեժիմների կիրառման արդյունավետության բարձրացման համար:

4.Ծրագրի խնդիրները և նախատեսվող աշխատանքները

4.1. Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

ա)<<Գոռավանի ավազուտներ>> արգելավայրի տարածքի և դրա պահպանական գոտու ներկա սահմանների վերաբերյալ ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն.

բ) արգելավայրի տարածքում և նրա պահպանման գոտում բնական պաշարների գույքագրում և քարտեզագրում.

գ) հարակից համայնքային հողերի սահմանների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում.

դ) արգելավայրի և նրա պահպանման գոտիների ամփոփ նկարագրական բացատրագրերի մշակում.

ե) համագործակցություն և ներդաշնակ գործողությունների իրականացում մարզի, համայնքների, արգելավայրի և դրան հարակից գոտիներում իրականացվող ծրագրերի հետ.

զ) արգելավայրի և նրա պահպանման գոտում բույսերի և կենդանիների էնդեմիկ, հազվագյուտ և վտանգված տեսակների, դրանց աճելավայրերի և ապրելավայրերի վիճակի ու դրանց վատթարացման պատճառների ուսումնասիրում և բացահայտում

է)<<Գոռավանի ավազուտներ>>արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումը, այդ թվում հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող վտանգված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

ը) վայրի բույսերի և կենդանիների տեսակների բնական միջավայրի պահպանությունը.

թ) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը.

ժ) ջուզգունի, միջերկրածովային կրիայի, պարսկական կլորագլխի, ինչպես նաև այլ բուսական և կենդանական օբյեկտների էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, մոնիտորինգը և վերարտադրությունը.

ժա) արգելավայրի ռեժիմին համապատասխան զբոսաշրջության տարբեր ձևերի կազմակերպումը:

4.2. Ծրագրով նախատեսվող աշխատանքներն են՝

ա) արգելավայրի և նրա պահպանման գոտիներում հանդիպող հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների տարածվածության ուսումնասիրում և նկարագրություն /Քարտեզագրական նկարագրում/.

բ) արգելավայրի և նրա պահպանման գոտիներում հանդիպող հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների տեսակների, դրանց աճելավայրերի և ապրելավայրերի վիճակի ու դրանց վատթարացման պատճառների ուսումնասիրում և բացահայտում.

գ) նախատեսել և առանձնացնել արգելավայրի մի շարք տարածքներում անասունների համար անցուղիներ.

դ) ցանկապատել արգելավայրի մի շարք հատվածներ՝ անասունների մուտքը կանխարգելելու նպատակով.

ե) ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ մշակել և կառուցել/առանձնացնել արգելավայրում զբոսաշրջության համար նախատեսվող երթուղիներ.

զ) ՀՀ մշակույթի նախարարության հետ համաձայնեցնելուց հետո տեղադրել համապատասխան տաղավարներ արգելավայրի առանձնացված մասերում կարճատև հանգստի կազմակերպման նպատակով.

է) իրականացնել խնամքի և սանիտարական մաքրման աշխատանքներ ջուզգունի բնական վերաճը ապահովելու նպատակով.

ը) տնկարանային տնտեսության կազմակերպում 2 հա տարածքի վրա,

թ) տնկել ջուզգունի տնկիներ արգելավայրի բուսականությունից զուրկ տեղամասերում:

4.3. Ծրագրի ժամկետները՝

Ծրագրում ներառված միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2013-2015թթ.ժամանակահատվածում՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ ներքոհիշյալ ժամանակացույցով՝

Հ/հ	Միջոցառումները	Միջոցառումների իրականացման Ժամկետը	Միջոցառումների իրականացման շրջանակներում կատարվող աշխատանքների ծավալը
1	Արգելավայրի տարածքի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բուսատեսակների գույքագրում և նշագրված ցուցակների կազմում	2013թ.	x
2	Արգելավայրի տարածքի քարտեզագրում և բուսատեսակների կադաստրի ստեղծում	2013թ.	95.99 հա
3	Խնամքի, մշակման, պաշտպանական, պահպանության և այլ անհրաժեշտ աշխատանքների համար տրանսպորտային միջոցի ձեռքբերում	2013թ.	Մինի տրակտոր՝ 1 հատ Ավտոմեքենա՝ 1 հատ
4	Ջուզգունի բնական վերաճը ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	2013թ.	95.99 հա
5	Ջուզգունի բուսակներ աճեցնելու նպատակով	2013թ.	2 հա

	տնկարանային տնտեսության հիմնում: Տնկարանի տարածքի ցանկապատում		400 մ
6	Արգելավայրի պահպանման գոտում աճող ջուզգունի բնական վերաճի տնկիներով, ինչպես նաև հիմնադրվող տնկարանում աճեցված տնկիներով արգելավայրի բուսականությունից զուրկ տարածքներում տնկման աշխատանքներ	2013-2015թթ.	4 հա
7	Տարածքի ցանկապատում, ինչպես նաև բնական ցանկապատի ստեղծում	2013-2015թթ.	1.5 կմ
8	Հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերում	2013թ.	x
9	Ցուցապաստառների, ցուցանակների և ուղեցույցների ձեռքբերում և տեղադրում	2013թ.	50 հատ
10	Տնակի գնում և տեղադրում	2013թ.	2 տնակ
11	Տարածքի ցանկապատում և անասնապահության նպատակով արգելավայրին հարակից արոտավայրերի օգտագործումը չխոչընդոտելու համար անցուղիների առանձնացում	2013-2015թթ.	0.5 կմ
12	Արգելավայրի ռեժիմին համապատասխան զբոսաշրջության տարբեր ձևերի կազմակերպում և համապատասխան ենթակառուցվածքի ստեղծում	2014-2015թթ.	
	ա/. <<Գոռավանի ավազուտներ>>պետական արգելավայրի վերաբերյալ ուղեցույցների, բուկլետների և ֆոտոալբոմների պատրաստում և տպագրում	2014թ.	3 հատ՝ 1000-ական տպաքանակով
	բ/. Կարճատև հանգստի կազմակերպման նպատակով առանձնացված մասերում հանգստյան գոտիների, համապատասխան տաղավարների, ցուցանակների տեղադրում	2014-2015թթ.	Ցուցանակներ՝ ըստ անհրաժեշտության Տաղավարներ՝ 5 հատ
13	Արգելավայրի տարածքում անտառտնտեսական աշխատանքների իրականացում՝		
	Տնկարանի խնամք		2 հա
	Ոռոգման ցանցի ընթացիկ նորոգում	2014թ-ից սկսած	10 կմ
	Ոռոգման աշխատանքներ		200.0 խմ
	Հողի նախապատրաստում		15 հա
	Տնկանյութի աճեցում / ջուզգունի բուսակների աճեցում/		20.0 հազ. հատ